

ներքին և արտաքին թշնամութիւններէ զդուած կը հրաժարի, բայց հրաժարականը կը մերժուի Պոլսի պատրիարքարանէն՝ ուրկէ գրեթէ կը զրկուին Մխարանութեան՝ որ աջակցի պարքին: Նոյն թուականին է որ Պօղոս պտրք. հինգ եպիսկոպոսներու, չորս վարդապետներու և հին և նոր քարգեւաններու ստորագրութիւններով խտաւ կը բողոքէ Գաղղիոյ դեսպանին՝ Յոպպէի վանքի դրան բանալիին եւ Սիօնի գերեզմանատան խնդիրներուն համար: Ան կը վախճանի 1775ին և կը թաղուի Ս. Փրկչի վանքը, իր տապանագիրն է հետեւեալը.

«Հողանիւթեայ այս դամբարան

Մարմնոյ միայն սա կայարան.

Նիւթ առաջին և զոյարան.

Վախճան վերջին առ որ դառնան:

Արդ՝ որ եգեալս է յայս տապան,

Պօղոսի արհի ըսբունական,

Նստեալ յՍթու պատրիարքական,

Որ ի Սաղիմ՝ երկիրն կոչման:

Բակերտ բարի քաջ հովուական

Եւ սիրելի յաչս մարդկան.

Խուն ինչ ցաւօք թողեալ զայս կեանս.

Ծածկեալ եղև ներհոյ տապան:

Թ՛վին. ՌՄԻԴ» (= 1775):

ՊՕՂՈՍ ՊԿ. ԳՐԻԳՈՐԵԱՆ, ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՅԻ.— Մբ. Ծ. 1763ին. որդի դերձակ Գրիգորի. աշկ. Խիւսալեթի վարժապետին Պոլսի մէջ՝ հայերէնի համար. իսկ արաբերէն և պարսկերէն ուսանելու նպատակով կ'ուղևորի Եգիպտոս և Պաղտատ. Գ. անգամ ըլլալով 1793ին կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, առաջինը՝ Պոլսէն հետևոտս, և կը կարգուի սպասաւոր Ս. Գեղեղմանին. Զո. 1707ին Պետրոս պտրք.էն. յաջորդաբար կ'ընտրուի քարտուղար պտրք.ի, գեռ նորընծայ՝ Ն. Թօխատի, Պուրսայի, Զմիւռնիոյ և Կուտինայի (1801—2). Փկե. 1809ին. եպս. կը ձեռնադրուի 1814ին. իր գործունէութեան մանրամասնութիւնները տեսնել (ՄԶ. Թ. 85): ՊԿ. (1816—1823). իր պատրիարքութեան ազգային և եկեղեցական դէպքերը (տե՛ս Պերպրեան, էջ 80 և այլն): Պօղոս պտրք. Թէոդորոս պտրք.ի մահուանէ վերջ, թէև